ԱՌԱԿՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ
(1914–1984)

Հ. Շիրազը ծնվել է Գյումրիում: Ամբողջ կյանքում նրա համար անմոռաց մնացին հոր՝ բոստանչի Թադևոսի և մոր՝ Աստղիկի հետ կապված տպավորությունները:

1930 թ. պատանի Շիրազի բանաստեղծությունները տպագրվում են տեքստիլ գործարանի թերթում: Այդ գործարանում նա աշխատում էր որպես ջուլհակ: Հետագայում երիտասարդ բանաստեղծի անունը շրջում է Երևանում:

Սկզբում գրողն իր բանաստեղծությունները ստորագրում էր Հովհաննես Շիրակ: Սակայն գրող Ատրպետը առաջարկում է Շիրակը փոխել Շիրազով, որովհետև, ինչպես ինքն է նկատում, պատանու բանաստեղծություններն Իրանի վարդաշատ քաղաք Շիրազի վարդերի բույրն ունեն:

1935 թ. լույս է տեսնում Շիրազի առաջին գիրքը՝ «Գարնանամուտ» վերնագրով:

Թաղված է Կոմիտասի անվան պանթեոնում: